ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ԹԻՎ ԱԺԽՈ-006-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 104-րդ հոդվածի 3-րդ մասով, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խորհուրդը ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խորհրդի 2017 թվականի հունիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի կառուցվածքը և կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ ԱԺԽՈ-006-Լ որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված 1-ին հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 1-ին կետից հանել «պետական կառավարչական հիմնարկ է, որը,» բառերը.

2) ուժը կորցրած ճանաչել 2-րդ կետը.

3) 4-րդ կետում «Պետական կառավարչական հիմնարկների մասին» բառերը փոխարինել «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» բառերով.

4) ուժը կորցրած ճանաչել 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերը.

5) 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«14" Աշխատակազմն իր հիմնական խնդրին համապատասխան իրականացնում է հետևյալ հիմնական գործառույթները.

1) ապահովում է Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված ՀՀ Սահմանադրության, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների, ՀՀ օրենքների նախագծերի, ինչպես նաև Ազգային ժողովի որոշումների, հայտարարությունների, ուղերձների և այլ իրավական ակտերի նախագծերի շրջանառության մեջ դնելու և հաշվառելու աշխատանքների իրականացումը"

2) ապահովում է Ազգային ժողովի նիստերի, խորհրդի նիստերի, խորհրդարանական լսումների, պետական բյուջեի նախագծի նախնական քննարկումների համար հրավիրվող նիստերի մասնագիտական և կազմակերպչական սպասարկումը, Ազգային ժողովի նիստում հարցերի քննարկման նախապատրաստումը, Ազգային ժողովի հերթական նստաշրջանների և նիստերի, հերթական նիստերի օրակարգային հարցերի քննարկման հաջորդականության նախագծերի, նիստերի արձանագրությունների կազմումը, Ազգային ժողովի նիստերի սղագրումը, օժանդակում է Ազգային ժողովի հաշվիչ հանձնախմբի աշխատանքներին"

3) նախապատրաստում և Ազգային ժողովի նախագահին է ներկայացնում Ազգային ժողովի նախագահի որոշումների, կարգադրությունների, ինչպես նաև Ազգային ժողովի, Խորհրդի որոշումների և այլ ենթաօրենսդրական ակտերի ու փաստաթղթերի նախագծեր"

4) ապահովում է Ազգային ժողով ներկայացված ՀՀ օրենքների և Ազգային ժողովի որոշումների, ուղերձների և հայտարարությունների նախագծերի, ինչպես նաև Ազգային ժողովի նախագահի ստորագրմանը ներկայացվող իրավական ակտերի և այլ փաստաթղթերի համապատասխանությունը հայոց լեզվի կանոններին, իրականացնում է դրանց խմբագրումը, համակարգչային մուտքագրման կազմակերպումը, համընթերցումը, սրբագրումը, հաշվառումը, անհրաժեշտության դեպքում՝ թարգմանությունը և ըստ պատկանելության դրանց առաքման նախապատրաստումը"

5) ապահովում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքի և դրա հիմքում ընկած տեղեկատվական համակարգերի կառավարումը, Ազգային ժողովի որոշումների, հայտարարությունների, ուղերձների, Խորհրդի, Ազգային ժողովի նախագահի որոշումների ոչ պաշտոնական հրապարակումը, Ազգային ժողովի, նրա հանձնաժողովների նիստերի, ինչպես նաև խորհրդարանական լսումների առցանց հեռարձակումը, վարում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքը (www.parliament.am, ինտերնետային և ինտրանետային էջեր).

6) խորհրդատվություն է տրամադրում Ազգային ժողովի մարմիններին և Ազգային ժողովի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներին Ազգային ժողովի մարմինների գործառույթների իրականացման, օրենսդրական գործընթացի, Ազգային ժողովի, Ազգային ժողովի խորհդի նիստում հարցերի քննարկման և ընդունման ընթացակարգերի և խորհրդարանական իրավունքին վերաբերող այլ հարցերի վերաբերյալ, համագործակցում է Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների,

աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների, ՀՀ վարչապետի աշխատակազմի, ՀՀ նախագահի աշխատակազմի և ՀՀ պետական իշխանության այլ մարմինների հետ Ազգային ժողովի նիստերի աշխատանքների կազմակերպման և համակարգման նպատակով"

7) իրականացնում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ միջազգային պայմանագրերի, ՀՀ օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հայտարարությունների, ուղերձների, Խորհրդի որոշումների նախագծերի մասնագիտական փորձաքննություն և ներկայացնում եզրակացություն, տրամադրում անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվություն՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխանությունն ապահովելու նպատակով"

8) Ազգային ժողովի մարմիններին տեղեկատվություն տրամադրելու, մասնագիտական աջակցություն ապահովելու նպատակով ուսումնասիրում է պետական-իրավական, մարդու իրավունքների, պաշտպանության և անվտանգության, տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում առկա իրավիճակը, վերհանում օրենսդրական լուծում պահանջող խնդիրները և դրանց լուծում տալու առաջարկություններ մշակելու և ներկայացնելու նպատակով կազմակերպում և իրականացնում է հետազոտական-վերլուծական աշխատանքներ՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով համապատասխան մասնագիտական կազմակերպությունների, առանձին մասնագետների և փորձագետների.

9) Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների խորհրդարանական վերահսկողության գործառույթի իրականացմանն աջակցելու նպատակով իրականացնում է պատգամավորի կողմից շրջանառության մեջ դրված օրենքների նախագծերի ընդունվելու դեպքում հնարավոր արդյունքների կանխատեսում, ընդունված օրենքների ուժի մեջ մտնելուց հետո դրանց գործողության և/կամ կիրառման մշտադիտարկում.

10) Ազգային ժողովի միջազգային և միջխորհրդարանական կապերի հաստատմանն ու զարգացմանն ուղղված գործառույթների պատշաճ կատարման նպատակով համագործակցում է այլ պետությունների խորհրդարանների, միջազգային խորհրդարանական կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների աշխատակազմերի հետ.

11) Ազգային ժողովի նախագահի և Ազգային ժողովի մյուս մարմինների հետ միջազգային կազմակերպությունների և խորհրդարանների, ինչպես նաև օտարերկրյա

պետական մարմինների, պաշտոնատար անձանց, օտարերկրյա քաղաքական և հասարակական գործիչների միջև արդյունավետ գործունեություն ապահովելու նպատակով տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվական և վերլուծական նյութեր, ինչպես նաև կազմակերպում և ապահովում է քարտուղարությունների աշխատանքների իրականացումը.

12) կազմակերպում և ապահովում է Ազգային ժողովի նախագահի, Ազգային ժողովի մյուս մարմինների, Աշխատակազմի ղեկավարի գործունեության հետ կապված արարողակարգային միջոցառումները.

13) ապահովում է պատշաճ աշխատանքային պայմաններ Ազգային ժողովի և նրա մարմինների, Ազգային ժողովի բարեկամական խմբերի, միջազգային խորհրդարանական կազմակերպություններում, միջխորհրդարանական հանձնաժողովներում Ազգային ժողովի պատվիրակությունների և այլ պաշտոնական պատվիրակությունների բնականոն գործունեության համար.

14) կազմակերպում, ապահովում է Ազգային ժողովի և նրա մարմինների, Աշխատակազմի գործունեության հրապարակայնությունը, լուսաբանումը, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներով հանրությանն իրազեկում է Ազգային ժողովի նախագահի և Ազգային ժողովի մյուս մարմինների աշխատանքների մասին.

15) իրականացնում է մամուլի մշտադիտարկում, ապահովում Ազգային Ժողովի մարմիններին անհրաժեշտ տեղեկատվությամբ, արդյունքների հիման վրա կատարում է մամուլի շաբաթական, ամսական վերլուծություններ՝ տրամադրելով նյութերը Ազգային Ժողովի մարմիններին"

16) իրականացնում է Ազգային ժողովի նախագահին և Աշխատակազմին ուղղված նամակներում և հարցումներում արծարծված հարցերի ուսումնասիրություն, վերլուծություն, անհրաժեշտ տեղեկատվության ստացում և դրանց հիման վրա պատասխանում դիմումատուներին.

17) ներգրավում և կազմակերպում է քաղաքացիների, ուսումնական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների և շահագրգիռ խմբերի ընդունելություն.

18) իրականացնում է Ազգային Ժողովի ներքին և արտաքին ոչ գաղտնի փաստաթղթաշրջանառությունը, վարում է Ազգային ժողովի և Աշխատակազմի գրադարանային և արխիվային գործը.

19) իրականացնում է Ազգային ժողովի և նրա մարմինների ֆինանսական ապահովումը.

20) կազմակերպում և ապահովում է Աշխատակազմում ներքին աուդիտի իրականացումը.

21) ապահովում և վերահսկում է Ազգային ժողովում և Աշխատակազմում պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանությունը և կազմակերպում է գաղտնի գործավարությունը.

22) իրականացնում է Աշխատակազմում պետական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների, ինչպես նաև Աշխատակազմում պետական ծառայողների վերապատրաստման ու ատեստավորման նախապատրաստական, կազմակերպման և իրականացման աշխատանքները.

23) իրականացնում է Ազգային ժողովի պատգամավորների, Աշխատակազմի վարչական, հայեցողական, պետական ծառայության պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց անձնական գործերի վարումը.

24) ՀՀ օրենքները և Ազգային ժողովի որոշումները ՀՀ սահմանադրական դատարանում վիճարկելիս նախապատրաստում է վեճի առնչությամբ պատասխանների, բացատրությունների, հայտարարությունների և իրավական բնույթի այլ փաստաթղթերի նախագծեր"

25) նախապատրաստում է Հայաստանի Հանրապետության դատարաններում Ազգային ժողովի կամ Աշխատակազմի շահերի պաշտպանությանն առնչվող իրավական բնույթի փաստաթղթերի նախագծեր և ապահովում է ներկայացուցչության իրականացումը դատարաններում"

26) իրականացնում և ապահովում է Ազգային ժողովի նստաշրջանների, մշտական հանձնաժողովների և Խորհրդի նիստերի, խորհրդարանական լսումների նյութատեխնիկական սպասարկումը.

27) ապահովում է Ազգային ժողովի շարժական և անշարժ գույքի սպասարկումը, պահպանությունը և անվտանգ շահագործումը"

28) հսկողություն է իրականացնում Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող աշխատանքային, տեխնիկական և հակահրդեհային անվտանգության կանոնների պահպանման համար"

29) իրականացնում և ապահովում է Ազգային ժողովի և նրա մարմինների, նստաշրջանների, մշտական հանձնաժողովների և Խորհրդի նիստերի, խորհրդարանական լսումների տեղեկատվական, տեխնոլոգիական, ծրագրային, համացանցային տեղեկատվական սարքավորումների սպասարկումը.

30) իրականացնում է խաղաղ ժամանակ և Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության և ռազմական գործողություններ պայմաններում զորահավաքային նախապատրաստության, զորահավաքի և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորման և իրականացման ապահովումը"

31) համագործակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, ինչպես նաև օտարերկրյա պետական մարմինների, միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների, դրանց պաշտոնատար անձանց հետ, ստանում է անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր:»

6) 18-րդ կետի 1-ին ենթակետից հանել «գլխավոր խորհրդականին» բառերը.

7) 20-րդ կետի 3-րդ ենթակետում «տնօրինում» բառից առաջ ավելացնել օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգով

8) Նույն կետի 9-րդ ենթակետում «հրամաններ,» բառից հետո լրացնել «հանձնարարականներ» բառը.

9) Նույն կետի 11-րդ ենթակետում «մասնակցել» բառը փոխել «ներկա գտնվել» բառով

10) 24-րդ և 25-րդ կետերում «հայեցողական» բառից առաջ լրացնել «վարչական,» բառը, իսկ 25-րդ կետում «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» բառերը փոխարինել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» բառերով.

11)26-րդ կետից հանել «գլխավոր խորհրդականը,», իսկ 27-րդ կետից՝ «գլխավոր խորհրդականի,» բառերը.

12) 28-րդ կետում «կազմակերպել և ղեկավարել» բառերը փոխել «համակարգել» բառով

13) 32-րդ կետից հանել «խորհրդականին և», 33-րդ կետից՝ «խորհրդականը,», 34-րդ կետից՝ «խորհրդականի,» բառերը.

14) 38-րդ կետից հանել «կամ նրա լիազորած Աշխատակազմի ղեկավարի տեղակալի» բառերը

15) ուժը կորցրած ճանաչել 45-րդ կետը.

16) 48-րդ կետից հանել «գլխավոր խորհրդականը,» բառերը.

17) 53-րդ կետից հանել «առանձնացված» բառը

18) ուժը կորցրած ճանաչել 7-րդ գլուխը:

2.Որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) Անձնակազմի կառավարման վարչությունն անվանափոխել մարդկային ռեսուրսների կառավարման վարչության (մարդկային ռեսուրսների հավաքագրման, ուսուցումների և մրցույթների կազմակերպման բաժին, կադրային գործերի փաստաթղթավորման բաժին).

2) Իրավական սպասարկման բաժինն անվանափոխել իրավական ապահովման և սպասարկման բաժնի.

3) Կառուցվածքում ստեղծել հասարակայնության հետ կապերի և հաղորդակցության վարչություն (տեղեկատվական և վերլուծական բաժին, թղթակցային բաժին, լրատվության արտադրության բաժին)

4) Կառուցվածքում ստեղծել զորահավաքային նախապատրաստության, զորահավաքային ծրագրերի և քաղաքացիական պաշտպանության բաժին.

5) Ֆինանսական վարչությունը անվանափոխել ֆինանսական կառավարման և հաշվառման վարչության (հաշվապահություն, բյուջետային կառավարման և գնումների բաժին)"

6) Կատարել հետևյալ կառուցվածքային փոփոխությունները՝

ա. իրավական փորձաքննության վարչությունը և տնտեսագիտական փորձաքննության վարչությունը միաձուլել՝ ստեղծելով փորձագիտական և վերլուծական վարչություն (պետահիրավական փորձաքննության բաժին, ֆինանսատնտեսագիտական փորձաքննության բաժին, սոցիալ, կրթական, առողջապահական փորձաքննության բաժին, օրենսդրական մոնիտորինգի և տեղեկատվական բաժին):

բ. դադարեցնել տեղեկատվական և վերլուծական վարչության գործունեությունը.

գ. դադարեցնել լրատվության և հանրության հետ կապերի վարչության գործունեությունը.

դ. քաղաքացիների ընդունելության և նամակների բաժինը և ընդհանուր բաժինը միաձուլել՝ ստեղծելով քաղաքացիների ընդունելության և փաստաթղթաշրջանառության վարչություն.

ե. նյութատեխնիկական ապահովության վարչությունը բաժանել՝ ստեղծելով վարչատնտեսական վարչություն (մատակարարման բաժին, շահագործման բաժին և ավտոտրանսպորտային բաժին) և ավտոմատ կառավարման և տեղեկատվական համակարգերի վարչություն (ինտերնետային ռեսուրսների և հավելվածների սպասարկման բաժին, ծրագրերի, սարքերի և ցանցերի ապահովման բաժին).

7) 12-րդ կետը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Մարդկային ռեսուրսների կառավարման վարչություն (մարդկային ռեսուրսների հավաքագրման, ուսուցումների և մրցույթների կազմակերպման բաժին, կադրային գործերի փաստաթղթավորման բաժին)».

8) 16-րդ կետը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «ֆինանսական կառավարման և հաշվառման վարչություն (հաշվապահություն, բյուջետային կառավարման և գնումների բաժին)

9) 20-րդ կետը վերաշարադրել հետևյալ խմբագրութամբ՝ իրավական ապահովման և սպասարկման բաժին».

10) Այդ կապակցությամբ Որոշման 2-րդ հավելվածում՝

ա.ուժը կորցրած ճանաչել 9-րդ,10-րդ, 11-րդ, 13-րդ, 17-րդ, 21-րդ և 22-րդ կետերը.

բ.լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 24-29-րդ կետեր՝

«24. Փորձագիտական և վերլուծական վարչություն (պետաիրավական փորձաքննության բաժին, ֆինանսատնտեսագիտական փորձաքննության բաժին, սոցիալ, կրթական, առողջապահական փորձաքննության բաժին, օրենսդրական մոնիտորինգի և տեղեկատվական բաժին)

25. Հասարակայնության հետ կապերի և հաղորդակցության վարչություն (տեղեկատվական և վերլուծական բաժին, թղթակցային բաժին, լրատվության արտադրության բաժին)

26. Քաղաքացիների ընդունելության և փաստաթղթաշրջանառության վարչություն (քաղաքացիների ընդունելության և նամակների բաժին և ընդհանուր բաժին)

27. Վարչատնտեսական վարչություն (մատակարարման բաժին, շահագործման բաժին և ավտոտրանսպորտային բաժին)

28. Ավտոմատ կառավարման և տեղեկատվական համակարգերի վարչություն (ինտերնետային ռեսուրսների և հավելվածների սպասարկման բաժին, ծրագրերի, սարքերի և ցանցերի ապահովման բաժին)

29. Զորահավաքային նախապատրաստության, զորահավաքային ծրագրերի և քաղաքացիական պաշտպանության բաժին»: